

ՄԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

«Աղբիւր» ամսաթերթի խմբագրութիւնը հարկ է համարել, իւր ալս տարւալ 3-րդ №-ում, «Մուրճ»-ի խմբագրութեանը անաչառութեան և պարտաճանաչութեան մի զաս կարողալ: «Աղբիւր»-ի խմբագրութիւնը հարցնում է մեզ. «Ինչո՞ւ՝ քննադատելով «Աղբիւր»-ից արտատպած գրքերը՝ մի բերան չէք չիչում, որ նրանք «Աղբիւր»-ից են արտատպւած»...

Մենք կարծում ենք, որ արդէն հասարակութիւնը մեզ բաւականի է ճանաչում, որպէս զի մեր դէմ ուղղած մի ալղպիսի հարցմունք անտեղի համարէր: Բայց քանի որ ալս դէպքում մենք նշմարում ենք ուրացութիւն կատարւած փաստերի, աւելորդ չենք համարում չալտնել, որ «Աղբիւր»-ի խմբագրութիւնը, մեր դէմ մեղադրանք բարձրացնելով, կուրուսեան զո՞ն է հանդիսացել: «Մուրճ» ամսագիրը, իւր գոլութեան օրից, «Աղբիւր»-ի վեց հրատարակութիւնների մասին դէպք է ունեցել խօսելու կամ չալտարարելու Գոցանից՝

Առաջինը եղել է Մ. Չմշկեանի Օրացուցը, որի մասին ասւած է՝ հրատարակութիւն «Աղբիւր» ամսագրի. («Մուրճ», 1889 թ., № 1, Գրախօսութիւն, երես 171):

Երկրորդն եղել է Ինքը «Աղբիւր»-ը, որի համար չիչւած է նորա խմբագիր-հրատարակչի անունը («Մուրճ», 1889 թ. № 4, Գրախօսութիւն, երես 668):

Երրորդը եղած է պ. Կ. Մելիք-Շահնազարեանցի «Բուսական աշխարհից—անմշակ և մշակւած ծառի կեանքը», որի մասին ասւած է՝ հրատարակութիւն «Աղբիւր»-ի («Մուրճ», 1889 թ., № 7, Գրախօսութիւն, եր. 1115):

Չորրորդը եղած է պ. Տէր-Աւետիքեանի «Տեղագրական նամականի», որի մասին ասւած է՝ հրատարակութիւն «Աղբիւր» մանկական ամսագրի («Մուրճ», 1889 թ., № 9, Գրախօսութիւն, երես 1466 և № 12, Գրախօսութիւն, երես 1982):

Հինգերորդը եղած է պ. Փիլիպպոս Վարդանեանի թարգմանութիւնը՝ «Արեւելեան վիպաշխարհ—Ռուստէմ և Չոհրաբ», որի մասին ասւած է՝ հրատարակութիւն «Աղբիւր» ամսագրի («Մուրճ», 1889, № 12, Գրախ., եր. 1984) և որի մասին ընդարձակօրէն խօսւած է միայն «Մուրճ»-ի 1890 թ. № 2-ում:

Վեցերորդը, վերջապէս, եղած է Գիւտ քահանայ Աղանեանցի «Օրացուց 1890 թ.», որի մասին ասւած է՝ հրատարակութիւն «Աղբիւր» պատկերազարդ ամսագրի. («Մուրճ», 1890, № 1, Գրախօս., եր. 112):

Եթէ չենք սխալուում, սոքա են եղած «Աղբիւր»-ի այն բոլոր գրքերը, որ ստացւած են ցայսօր «Մուրճ»-ի խմբագրութեան մէջ:

Եւ այս բոլոր իրողութիւնները սքողելու համար՝ «Աղբիւրի» խմբագրութիւնը իւր նկատողութիւնը խմբագրել է այսպէս. «Ինչո՞ւ, քննադատելով «Աղբիւրի» արտատպած գրքերը, մի բերան չէք չիչուում, որ նրանք «Աղբիւրի» են արտատպւած, քանի որ գիտէք, թէ Ֆիլիթօսին յորտեղ և երբ է թարգմանւած»:

Նկատեցէք, որ չատկապէս Ֆիլիթօսինի Ռուստէմ և Ջոհրաբի թարգմանութեան մասին «Մուրճ»-ի մէջ ոչ թէ արդէն մի անգամ վիշտած է, թէ «Աղբիւր»-ի հրատարակութիւնն է, այլ նորա մասին արդէն մի անգամ էլ ասուած էր «Մուրճ»-ում, թէ «Աղբիւր»-ի մէջ էր ապուում: Եւ հաճախ թէ ինչ է ասել «Մուրճ»-ը այդ գրւածքի մասին դեռ ևս տասն և մէկ ամիս առաջ. «պ. ֆ. Վարդանանի... Ռուստէմ և Ջոհրաբ վէպը այս տարւակ «Աղբիւրի»... ամենալաւ և լաջող արձակ գրւածքն է: Աղպիսի գրւածքներ չափշտակութեամբ կարդացում են փոքրիկ ընթերցողներին. իսկ դորա նման ճոխ, գեղեցիկ ու կանոնաւոր լեզուն աննկատելի կերպով դրոշմում է մանուկ խելքերում մայրենի լեզուի համը և ոգին»։ տես «Մուրճ» 1889, № 4, Գրախօսութիւն, եր. 670—671:

«Աղբիւրի» խմբագրութեան համար այս բոլորը բաւական չէ: Նա պահանջում է մեղմից, երևի, որ մի 48 թէ որքան երես պարունակող գրքովի համար «Մուրճ»-ը 48 տեղում չապարարէ, թէ այդ գրքովի «Աղբիւրի» հրատարակութիւնն է: Ո՛չ, պարոններ, պարտաճանաչութեան և խմբագրական դասեր ունիք տալու՝ որոնեցէք ունկնդիրներ ուրիշ տեղերում:

Մեր ընթերցողների ուշադրութիւնն ենք դարձնում այս Ֆիլիթօսի տպուող պ. Մելիք-Շահնաղարեանցի վէպի վերայ՝ «Հայ Գիւղացու սև օրը», որը կապ ունի պանդխտութեան խնդրի հետ:

Վերջին ժամին ստացանք հետևեալ գիրքը՝

ՍԱՐԳՍՐԵԱՆՑ ԱԴԱՄ.—«ՁԻԱՐՃԱԼԻ ԺԱՄԵՐ», Ժողովածու հանելուկների, բառախաղերի, խաղերի, խնդիրների, ըբոսանների, ֆոկլորների, կատակների, անեկդոտների և այլն: Մասն առաջին, Թիֆլիս, տպարան Թոտինեանցի, 1890 թ., գինն է 40 կոպէկ:

Նույն հեղինակ.—«Բանալի կամ Բացատրութիւններ» Չարճալի Ժամերի: Մասն երկրորդ: Թիֆլիս, նույն տպարան, 1890 թ. գինն է 10 կոպ.

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԻՅՏԻՓ ԱՐԱՍԻԱՆՑԱՆՑ